

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստի

04.02.2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Նալբանդյանը - Կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
- Ա. Դարբինյանը - Կոմիտեի անդամ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
- Լ.Բերոյանը - Կոմիտեի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
- Ա.Սահակյանը - Կոմիտեի անդամ, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
- Ս.Լամբարյանը - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
- Ա.Հակոբյանը - «Աքորու ԱԱՊԿ» ՓԲԸ-ի տնօրեն
- Ա.Մանուչարյանը - «Գուգարքի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի տնօրեն
- Ա.Նազարյանը - «Մարզահովիտի ԱԿ» ՊՓԲԸ-ի տնօրեն
- Լ.Բաղդասարյանը - «Շահումյանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի տնօրեն
- Ն.Քոչարյանը - «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ -ի տնօրեն
- Գ.Դանիելյանը - «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ -ի տնօրենի պարտականությունները կատարող

Օրակարգում.

ՀՀ Լոռու մարզի «Աքորու ԱԱՊԿ», «Գուգարքի ԱԱՊԿ», «Մարզահովիտի ԱԿ», «Շահումյանի ԱԱՊԿ», «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» բաժնետիրական ընկերություններում իրականացված ներքին աուդիտի աշխատանքների արդյունքների՝ աուդիտորական հաշվետվությունների և եզրակացությունների քննարկում:

Կոմիտեի նախագահի առաջարկությանը քվեարկության դրվեց արձանագրված խախտումների և թերությունների վերացման և դրանց հետ կապված տնօրեններին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Բաց քվեարկությամբ 3 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ ձայներով՝

Որոշվեց.

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների, խախտումների համար առաջարկել ՀՀ Լոռու մարզպետին «Աքորու ԱԱՊԿ» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Քննարկման մասնակից բոլոր բաժնետիրական ընկերությունների տնօրեններին գրավոր հանձնարարել՝ 10-օրյա ժամկետում վերացնել արձանագրված թերությունները և խախտումները, արդյունքների մասին գրավոր տեղյակ պահել մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:



ԿՈՄԻՏԵԱՍԻՆԱԳԱՏ

*Handwritten signature*

ԱՆԱԲԱՆԴՅԱՆ

Արձ. Լ.Բերոյանը  
Հեռ. /0322/ 43-44-7